ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արթուր Պետիկի Մկրտչյանս, ծնվել եմ 1959թ. հունիս 21-ին Երևան քաղաքում:

Կրթություն.

1966-1976թթ. սովորել և ավարտել եմ Կապան քաղաքի թիվ 7 միջնակարգ դպրոցը:

1977-1982թթ. սովորել և ավարտել եմ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ իրավագիտություն մասնագիտությամբ:

Աշխատանքային փորձ.

1982-1983թթ. աշխատել եմ Կապանի ՆԳ բաժնի հետաքննիչի, ապա քննիչի պաշտոններում:

1983թ.-ից աշխատել եմ ՀՀ դատախազության համակարգում:

1983-1987թթ. աշխատել եմ Կապանի միջշրջանային դատախազության քննիչի, 1987-1991թթ. դատախազի օգնականի, այնուհետև 1991-1999թթ. Կապանի միջշրջանային դատախազի պաշտոններում:

1999-2000թթ. աշխատել եմ ՀՀ գլխավոր դատախազության դատարաններում քրեական գործերով մեղադրանի պաշտպանության վարչության ավագ դատախազի պաշտոնում:

2000-2006թթ. աշխատել եմ ՀՀ Լոռու մարզի դատախազի պաշտոնում:

2006-2010թթ. աշխատել եմ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով, ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով վարչությունների ավագ դատախազի պաշտոնում:

1995-1999թթ. և 2004-2005թթ. եղել եմ ՀՀ արդարադատության խորհրդի անդամ:

2010թ. հուլիս 1-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել եմ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր և պաշտոնավարել եմ մինչև 2017թ.:

ՀՀ ԱԺ-ի կողմից 2017թ. դեկտեմբերի 21-ի օրենքի ուժով շարունակել եմ պաշտոնավարել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնում:

ՀՀ նախագահի 2019թ. օգոստոսի 8-ի հրամանագրով նշանակվել եմ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ՝ 3 տարի ժամկետով, այնուհետև մինչև 2024թ. մարտի 25-ը պաշտոնավարել եմ նույն դատարանի դատավորի պաշտոնում:

2024թ. մարտի 25-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել եմ ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր և պաշտոնավարել մինչև հունիս 21-ը:

Պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ 2024թ. հունիսի 21-ից ՀՀ բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ դադարեցվել են ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի իմ լիազորությունները: